



## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Լոռու մարզի Ռուռուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

Անահիտ Կոլյայի Չաքարյան

Մաթեմատիկայի (Հանրահաշիվ և մ.ա.տ., Երկրաչափություն) ուսուցչուհի

2021-2022 ու.ս.տարի

Մենք այսօր կանգնած ենք արդի կյանքին և մարտահրավերներին համապատասխան կրթական նոր մշակույթ ստեղծելու հրամայականի առջև, ուստի շատ կարևորում եմ հաշվետվություն ներկայացնելուց առաջ կատարել ինքնավերլուծություն:



Ի՞նչ ենք ունեցել և ինչի՞ ենք հասել մեկ ուսումնական տարում:

Ինքնավերլուծության արդյունքում


- ✎ իրավիճակի վերլուծություն
- ✎ սահմանում կոնկրետ նպատակներ ու խնդիրներ
- ✎ կարևորագույն գործողություններ
- ✎ միջոցառումներ
- ✎ սահմանված նպատակների իրականացում
- ✎ գործողությունների հաջորդականություն և ժամանակացույց
- ✎ արդյունքների գնահատում

1980-1981 ուստարվանից աշխատում եմ Ուռուտի միջնակարգ դպրոցում՝ դասավանդում եմ Մաթեմատիկայի (Հանրահաշիվ և մ.ա.տ., Երկրաչափություն): Աշխատանքս կատարում եմ սիրով: Մաթեմատիկայի տեղն ու դերն այսօրվա իրականության մեջ անչափ մեծ է: Առավել մեծ է նաև մաթեմատիկա դասավանդող ուսուցչի դերը:

Աշխատանքային գործունեության 41 տարիների ընթացքում նպատակ եմ ունեցել աշակերտներին սովորեցնել, կրթել ու դաստիարակել այնպես, որ հասկանան, նկատեն, պատկերացնեն մաթեմատիկայի դերն ու նշանակությունը, տեղն ու հնարավորությունները, գեղեցկությունն ու կապը մյուս գիտությունների և ուսումնական առարկաների հետ: Աշխատանքային գործունեությունը դառնում է հաճելի ու սիրված մասնագիտություն նաև այն ժամանակ, երբ աշակերտները սիրում են, սովորում ու նաև այն ընտրում են որպես մասնագիտություն:

Ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի աշխատանքի հետ զուգահեռ հնարավորություն ունեմ դասավանդելու 8 դասաժամ: Դասավանդում եմ 2 դասարաններում՝ տասներորդ և տասնմեկերորդ: Այնպես է ստացվել, որ ես դասավանդել սկսում եմ ավագ դպրոցում՝ 10-րդ դասարանից: Այդ տարիքում արդեն սովորողի համար ամեն ինչ այլ է:

Աշակերտների թիվը՝





Ուսումնական տարին սկսել եմ աշխատանքների պլանավորումով, նոր և ժամանակակից պահանջների վերանայումով, նախորդ տարիների արդյունքներն մանրամասն ուսումնասիրելով, կաբինետի թարմացումով ու հարստացումով:


Աշխատանքներս կազմակերպելու նպատակով պլանավորել եմ X և XI դասարանների հանրահաշիվ և երկրաչափություն առարկաների պլանները, համապատասխանեցնելով հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչներին, որոնք կապահովեին կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայական չափորոշիչներով. ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ, մեթոդներ, որ կիրառել եմ և հասել շոշափելի արդյունքի:


Դասավանդման ընթացքում կիրառում եմ զանազան մեթոդներ, զուգակցում, գտնում ձևեր, որոնք կլինեն արդյունավետ այդ դասարանի համար՝ այդ իրավիճակում: Մշտապես դասարան մտնելիս առաջնորդվում եմ իմ իսկ նշանաբանով՝ «Աշակերտը իմ ընկերն է, պետք է լինել հավատարիմ և վստահելի»:

Դասը ստեղծագործական մոտեցումներով առավել հետաքրքիր է դարձնում առարկան: Այդ նպատակով անհրաժեշտ պահին օգտագործում եմ ամեն հնարավոր բան՝ միջառարկայական ու ներառարկայական կապ, ցուցադրական ու հենց դասի ընթացքում սովորողների


մասնակցությամբ պատրաստվող դիդակտիկ նյութեր, պաստառներ, աղյուսակներ, օգտագործում են S2S գործիքներ: Երբեմն դասին մասնակցում են մ/մ անդամները:








## X դասարան – դասղեկ Անահիտ Մանուկյան (9 աշակերտ)



Նախորդ տարիներին դասավանդել է Ա. Մարտիրոսյանը:

# XI դասարան – դասղեկ Հրաչուհի Այվազյան (10 աշակերտ)



## 19 աշակերտներից Հանրահաշիվ և մ.ա.տ. (X-XI դաս.)

“9”	1 + 4 = 5	$\frac{19 \cdot x}{100} = 5$	x = 26.32%	26.32% - “9”	36.84%
“8”	1 + 1 = 2	$\frac{19 \cdot x}{100} = 2$	x = 10.52%	10.52% - “8”	
“7”	1 + 0 = 1	$\frac{19 \cdot x}{100} = 1$	x = 5.26%	5.26% - “7”	21.05%
“6”	2 + 1 = 3	$\frac{19 \cdot x}{100} = 3$	x = 15.79%	15.79% - “6”	
“5”	2 + 2 = 4	$\frac{19 \cdot x}{100} = 4$	x = 21.05%	21.05% - “5”	42.1%
“4”	2 + 2 = 4	$\frac{19 \cdot x}{100} = 4$	x = 21.05%	21.05% - “4”	

## 19 աշակերտներից Երկրաչափություն (X-XI դաս.)

“9”	1 + 3 = 4	$\frac{19 \cdot x}{100} = 4$	x = 21.05%	21.05% - “9”	42.1%
“8”	2 + 2 = 4	$\frac{19 \cdot x}{100} = 4$	x = 21.05%	21.05% - “8”	
“7”	1 + 1 = 2	$\frac{19 \cdot x}{100} = 2$	x = 10.52%	10.52% - “7”	31.57%
“6”	3 + 1 = 4	$\frac{19 \cdot x}{100} = 4$	x = 21.02%	21.05% - “6”	
“5”	0 + 2 = 2	$\frac{19 \cdot x}{100} = 2$	x = 10.52%	10.52% - “5”	26.31%
“4”	2 + 1 = 3	$\frac{19 \cdot x}{100} = 3$	x = 15.79%	15.79% - “4”	

Աշակերտներից Աննան, Քրիստինեն, Մանեն, Էլենը, Էմման, Լիանան, Գերասիմը, Արթուրը սիրում են և շատ լավ են աշխատում, յուրաքանչյուր աշխատանքի նկատմամբ ցուցաբերում են պատասխանատվություն, պարտաճանաչ են: Մշտապես կա հարգանքի և փոխըմբռնման մթնոլորտ, չեն կաշկանդվում, հարցնում են չհասկացածը, իրավունքների և պարտականությունների հիշեցման անհրաժեշտություն չի լինում: Այդպիսի մոտեցումները նպաստում են ինքնակառավարման տարրերի ձևավորմանը:

Համագործակցում են ծնողների, իմ շրջանավարտների հետ: Նրանք ուսումնական գործընթացում ունեն կարևոր, օրինակելի և ազդեցիկ դեր:

- Թեմատիկ գրավորներ / կիսամյակային գրավորներ (երկրորդ կիսամյակի կիսամյակային գրավորները փոխարինել են, բանավոր հարցաշարով, խրախուսել լավ պատասխանները) կազմել են քանակին համապատասխան:
- Բացատրել և հիմնավորել են գնահատման սկզբունքները, ցուցաբերել սեփական մոտեցումներ, կարծիքներ:
- Բաց դասերի իրականացման համար մշակել են պլաններ: Այս ուսումնական տարում դրանք քիչ էին:



- Առարկայական միջոցառումները իրականացվել են ռեֆերատների, զեկուցումների, բանավեճերի, խաղերի, մրցույթների, պաստառների ձևավորման միջոցով: Այս ուսումնական տարի ունեցել է մ բացթողում՝ օլիմպիադայի, կենգուրույի, ինչպես նաև համադպրոցական մաթեմատիկական միջոցառումների, ցերեկույթների կազմակերպման առումով:
- Մեթոդական զեկուցումներ են պատրաստել արդիական թեմաներով՝ մեթոդական, մանկավարժական, գիտական:
- Դասավանդներ իրականացրել են ոչ միայն մ/մ անդամների մոտ (աշխատանքի բերումով), քննարկել, համագործակցել, առաջարկել փորձի փոխանակում, որոնել միջառարկայական կապի իրականացման նոր մոտեցումներ:
- Համագործակցել են մ/մ նախագահի հետ:
- Դասավանդման ընթացքում նկատել են, որ ծրագրերը հազեցած են, ժամաքանակը քիչ:

### Առաջարկում են՝

- Ծանոթ լինելով դպրոցում ուսումնասիրելով ուսումնական առարկաներին, դասագրքերին, չափորոշչային պահանջներին՝ մտածում են, որ երեխաները շատ են ծանրաբեռնված: Լրացուցիչ աշխատանք դասից ու դասարանից դուրս, գեղարվեստական գրականություն, շփում բնության հետ, աշխատանքային դաստիարակություն և այլն, համացանց, հանգիստ, սպորտ:
- Ուսման որակը կբարձրանա, երբ դասավանդող ուսուցչի նկատմամբ լինի բավարար վերաբերմունք, հարգանք, վստահություն: